

ԿՐՈՆԱԿԱՆ

**ԻԳՆԱՏԻՈՆ ԵՊԱ.Ի ՄԵԿՆՈՒԹԻՒՆ
ՂՈՒԿԱՍՈՒ ԱԻԵՏԱՐԱՆԻ**

ՉԼՈՒՐ Ի

1.- Օր մը, երբ տաճարին մէջ ժողովուրդին կ'ուսուցանէք, քահանայապետերն ու դալիրները եկան, ըսին իրեն, ինչպիսի իշխանութեամբ կը գործես այդպէս: Դարձեալ սահար մտնելով կ'ուսուցանէք: Փարիսեցիները որոնք կարճ ժամանակ մը առաջ տեսան անոր փառքին մեծվայելզութիւնը որ մանկանց եւ տղայոց բերաներէն կը հաստատուէք, կը հայտանձեին: Քայլ չկրցան հակառակութիւն ցոյց տալ, ժողովուրդի բազմութեան պատճառաւ որոնք արմաւենի ոստերով կ'օրհնէնին անոր թագաւորութիւնը ըսելով. - որ Հնեալ եկեայ թագաւորութիւն նորա: Միւս օրը, ժողովուրդը հանդարտած գտնելով, յիշելով տաճարէն արտաքսուած վաճառականները, Համարձակեցան ըսելու. - ով տուաւ քեզ ոյդ իշխանութիւնը: Քահանա՝ մըն ես կամ վարդապետութեան աստիճա՞ն ստոցար: Արդ գիտնալով որ անոնք Աստուծմէ չեն վախնար, մարդոցմէ ալ չեն ամչնար, Հարցում կ'ուղիէ: Սակայն մօտեցած ըլլալով ուսանելու համար, չորվեցան եւ մնացին իրենց ախտին մէջ:

9.- Այնուհետեւ սկսաւ այգիի եւ մշակներու օրինակով անոնց արարքները մերժացնել, որով Աստուծոյ հակառակ գործեցին, խստութեամբ վարուեցան մարդարէներուն եւ առաքեալներուն հետ մեռցնելով դանոնք: Այս առակը պատմեց ժողովուրդեան: Մարդ մի այգի տնկեց եւ զայն յանձնեց մշակներու եւ ինք մեկնեցաւ օտար աշխարհ: Երբ Հունացի ժամանակը եկաւ, ծառան ղրկեց որպէսզի բերքի իր բաժինը ստանայ: Մշակները այս ծառան ծեծեցին եւ ձեռնունայն վերադարձուցին: Երկրորդ ծառայ մը եւս ղրկեց, անոր ալ ձեծեցին, խոշտանգեցին եւ ձեռնունայն ետ ղրկեցին: Երրորդ ծառային ալ նոյնձեւով ժարուեցան: Ապա այգիին տէրը ըսաւ . . . ինչ ընեմ: Սիրելի զաւակն ղրկեմ, թերեւս զինք յարգին: Երբոր մշակները տեսան որդին, ըսին իրարու. - այս է ժառանգորդը, Եթի զինք սպաննենք, այդին մերը կրնայ ըլլալ: Այդպէս ալ ըրին: Այգիին տէրը ինչ պիտի ընէ մշակներուն: Երբոր գոյ մշակները պիտի սպաննէ եւ այգին այլ մշակներու յանձնէ:

Երբոր այս լսեցին, ըսին. - քաւ լիցի: Անոնց նայելով բացատրեց. - քարր որ անարգեցին կամ լրեցին շինողները, ատեկա եղաւ անկիւնաքարը: Ով որ զարնուի ոյդ քարին կը խորտակուի. որուն վրայ որ իյնայ կը ջախջախէ: Դպիրներն ու Փարիսեցիները կը ջանային զայն ձեռք անցնել, վախցան ժողովուրդին, զի գիտցան թէ իրենց Համար պատմեց այս առակը: Այնուամենայնիւ ժառանգորդին դէմ ժողովութեամբ կոռւեցան: Ուրեմն ինչ պիտի ըլլայ անոնց արուելիք պատիճէ: Զարերուն Հատուցումբ դատաստանաւ կը արուի: Երբոր աէրը կը վերջացնէ խօսքը, անոնք կ'ամփոփուին. եւ Հրաժարելով այլ խօսքէ, - քաւ լիցի - կ'ըսեն:

17.- Վասն որոյ, ի՞նչպէս կ'արդարանան մարդարէին խօսքերը այն մասին թէ, լքեաւ վէճը անկիւնագլուխ կըլլայ. իսկ անոր ընդհարողները կը մարնուին: Անոնք պէտք էր դարձուրէին երբ այս իմացան, բայց փափաքեցան ձեռքակալել զայն, չկըցան որովհետեւ ժողովուրդին վախը արգելք եղաւ, օրն ալ տարածամիլ սկսած էր: Երբոր չկարողացան կալոնքի տակ առնել, խորհեցան որ Հռովմէացւոց օրէնքին հակառակ գործելուն համար դինք ամբաստանեն, հնարամտութեամբ կամ նենգութեամբ:

22.- Հարցուցին. պէտք է կայսեր հարկ վճարել թէ ոչ: Իսկ նա, որուն իմաստութիւնը անհուն է, զանոնք կը խայտառակէ նենգամտութեան համար եւ արդար դատաստանաւ կը լուծէ անոնց Հարցումը: Որովհետեւ դաշեկանին վրայի պատկերն ու վիրը որուն որ իլլ պատկանի, անոր պէտք է վերադարձնեն: Իսկ դուք դժեզ ընծայեցէք Աստուծոյ որուն պատկերով ստեղծուած էք:

27.- Երբ ասոնք լռեցին, Սադուկեցիները մօտեցան որոնք չեն հաւատար յարութեան: Բազմանկողին կին մը ստեղծեցին որը եօթը եղայրներու կին եղած էր եւ հորդ յարուցան էին թէ յարութեան ատեն որո՞ւն կինը պիտի նկատուի: Իսկ նա որ միշտ արդարութեամբ էր դատէ, կը վերադարձնէ անոնց անմիտ կարծիքը քանի որ յիմար են եւ չեն իմանար եւ տկար ըլլալով, տկարութեամբ կը չափեն զԱստուած: Անոնց կարծիքը կ'ուղիէ առ այն թէ ապականացու կիրքերու ախտալից բնութիւնը մեզ հետ յարութիւն չառներ: Այլ հրեշտականման են իրեւ Աստուծոյ որդիներ, անլուծանելի ինութեամբ: Ապա իր խօսքը կը փակէ Դանիէլ մարդարէին Հրեշտակին կողմէ եղած վկայութեամբ այսպէս. - Ամէնցը որո՞ւր ի հող յերկրի թաղուած են, յարութիւն պիտի առնեն: Ոմանք յամօթ եւ ի նախատինս յաւիտենական: Իսկ արդարները յաւիտենական կեանքի համար: Իմաստունները երկնցին երեսին վրայ իբրև լուսաւորներ պիտի ծագին, իբրև յաւիտինական աստղեր: Դանիէլ 12.2:

Մեռելներու յարութեան մասին, Մովսէս մարդարէն եւս ցոյց կուտայ այլովլ լայց չկիզուղ մորենին, Սինէական բարձունքին վրայ երբ Աստուծոյ համար կ'ըսէ. - Աստուած Աբրահամու, իսահակայ իւ Յակոբայ, Աստուած ոչ է Աստուած մեռելոց այլ կենդանինց, զի իրմով ամէնցը կան: Չուզելով իր խօսքը վերջացնել իր ծառային վկայութեամբը այլ Աստուած յԱստուծոյ ըլլալուն համար իբրև բնութեամբ հաւասար, ճշմարտութեան մասին վկայութիւն տուաւ:

41.- Ունկնդիրները մարդ կը համարէին զթիսուս եւ ոչ Աստուած մարդախառն. Ցիսուս հարցուց, - «Վ է Քրիստոսի Հայրը: Անոնք ալ Դաւիթ պատասխանեցին, ըսել ուզելով ըստ մարմնոյ: Սաղմոսներուն մէջ Դաւիթ ինքն իսկ կը յիշէ. - Տէրը ըսաւ Տիրոջս, նիստ ընդ աջմէ իմմէ, մինչեւ եղից զթշնամիս քո պատուանդան ոտից քոց: Այսպէս ուրեմն եթէ Դաւիթ զինք Տէր կը կոչէ, ի՞նչպէս ինք կրնայ Դաւթի որդի ըլլալ: Դաւիթ այսպէս կը մարգարէանայ Ա. Հոգուվ:

46.- Կը պախարակէ անոնց վերակացուները որովհետեւ արտաքին երեւոյթներով կը սոնքան, երկար պարեգօտներ կը հագուին, փողոցներուն մէջ ողջոյն կը փոխանակեն. Հաւաքատեղիներուն մէջ նախաթռու տեղ կը գրաւեն: Այրիներուն ինչքերը կը յափշտակեն, կ'երկարեն իրենց աղօթքները:

Ասոնք անշուշտ աւելի խիստ դատաստան պիտի կը բն:

* * * * *

* * * * *

* * * * *

* * * * *

* * * * *

* * * * *

* * * * *

* * * * *

* * * * *

* * * * *

* * * * *

* * * * *

* * * * *

* * * * *

* * * * *

* * * * *